Օպուզն ընդդեմ Թուրքիայի

(գանգատ թիվ՝33401/02)

Երրորդ բաժանմունքի 2009 թվականի հունիսի 9-ի վճիռ

Կոնվենցիայի 2-րդ հոդված

Պոզիտիվ պարտականություններ

Կոնվենցիայի 2-րդ հոդվածի 1-ին կետ

Կյանքի իրավունք

Ընտանեկան բռնության գործում նախկինում գործադրած բռնությունների մասին իշխանություններին հայտնի հանցագործի կողմից դիմումատուի մորը հասցված մահացու վնասվածքները: *Արձանագրվել է խախտում:*

Կոնվենցիայի 3-րդ հոդված

Նվաստացնող վերաբերմունք

Անմարդկային վերաբերմունք

Պոզիտիվ պարտականություններ

Իշխանությունների կողմից դիմումատուին և նրա ընտանիքը ընտանեկան բռնությունից պաշտպանելու համար համապատասխան միջոցառումներ չձեռնարկելը: *Արձանագրվել է խախտում:*

Կոնվենցիայի 14-րդ հոդված

Խտրականության արգելում

Դատական համակարգի կողմից ընտանեկան բռնության դեպքին համապատասխան անդրադարձ չկատարելը: *Արձանագրվել է խախտում:*

Փաստերը

2002 թվականին դիմումատուի ամուսինը հրազենային վնասվածք է հասցրել և սպանել դիմումատուի մորը, երբ վերջինս փորձել է օգնել դիմումատուին փախչել իր հայրական տնից: Հրազենային վնասվածք հասցնելու դեպքին նախորդող տարիների ընթացքում ամուսինը դիմումատուի և նրա մոր նկատմամբ մի շարք բռնություններ է գործադրել, որոնցից մի քանիսը հանգեցրել են այնպիսի վնասվածքների, որոնք բժիշկներն որակել են կյանքին սպառնացող: Միջադեպերը և կանանց՝ իրենց կյանքի համար վախի առկայության փաստը բազմիցս ներկայացվել են իշխանությունների ուշադրությանը: Թեև մի շարք հանցագործությունների կապակցությամբ ամուսնու դեմ քրեական գործ էր հարուցվել, ամուսնու գործադրած ճնշումների արդյունքում կանայք իրենց բողոքները հետ էին վերցնել, ինչի արդյունքում հարուցված գործերը կարճվել էին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով վնասվածքների ծանրության աստիճանը՝ երկու միջադեպերի մասով դատաքննությունը շարունակվել է: Ամուսինն առաջադրված երկու մեղադրանքով դատապարտվել է: Առաջին հանցագործության համար նա դատապարտվել է երեք ամիս ազատազրկման, որը հետագայում փոխարինվել է տուգանքով, իսկ երկրորդի համար նշանակվել է տուգանք, որը պետք է վճարվեր մասերով: Բռնությունների գագաթնակետ է հանդիսացել դիմումատուի մորը հրազենային վնասվածք հասցնելը, որը ճակատագրական է եղել, և որն ամուսինը պատճառաբանել է՝ որպես իր պատիվը պաշտպանելու նպատակով իրականացրած գործողություն: Այդ հանցագործության համար նա 2008 թվականին սպանության մեղադրանքով դատապարտվել է ցմահ ազատազրկման: Նա, այնուամենայնիվ, ազատ է արձակվել, երբ վերաքննիչ բողոքը դեռևս գտնվում էր վարույթում և շարունակել է սպառնալ դիմումատուին, ով իրեն պաշտպանություն տրամադրելու խնդրանքով դիմել էր իշխանություններին: Եվրոպական դատարանի՝ տեղեկություն տրամադրելու խնդրանքից յոթ ամիս անց միայն նրա պաշտպանության համար անհրաժեշտ միջոցառումներ են ձեռնարկվել:

Իրավունքը՝ Կոնվենցիայի 2-րդ հոդված

Դատարանը կրկնել է, որ երբ առկա է պնդում առ այն, որ իշխանությունները, անձի նկատմամբ հանցագործությունները կանխարգելելու և բացառելու համատեքստում խախտել են կյանքի իրավունքը պաշտպանելու իրենց պոզիտիվ պարտականությունը, պետք է ապացուցել, որ նրանք գիտեին կամ պարտավոր էին իմանալ, որ առկա է երրորդ անձի կողմից կոնկրետ անձի կամ անձանց խմբի կյանքին սպառնացող վտանգ, և իրենց իրավասության շրջանակներում չեն ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ, որոնք թույլ կտային շրջանցել վտանգը:

(ա) Վտանգի կանխատեսելիությունը

Գործի հանգամանքներից ակնհայտ երևում է դիմումատուի և նրա մոր նկատմամբ գործադրվող բռնության աճը, որը կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկելու համար բավականաչափ լուրջ հիմք էր, և ակնհայտ է, որ նրանց առողջությանը և անվտանգությանը շարունակաբար վտանգ է սպառնացել: Իշխանությունները տեղյակ էին իրավիճակի մասին, և իր մահից երկու շաբաթ առաջ մայրը տեղեկացրել էր դատախազությանը, որ իր կյանքը վտանգի տակ է՝ խնդրելով ոստիկանության անմիջական միջամտությունը: Մահվան ելքով հարձակման հնարավորությունը, հետևաբար, կանխատեսելի էր:

(բ) Արդյոք իշխանությունները ձեռնարկել են համապատասխան միջոցառումներ

Առաջին հարցն այն է, թե արդյոք դիմումատուի և նրա մոր կողմից բողոքները հետ վերցնելու պարագայում իշխանությունների կողմից դիմումատուի ամուսնուն քրեական պատասխանատվության չենթարկելն արդարացված էր: Դատարանը գտել է, որ չնայած այս հարցին միասնական մոտեցում չկա, պրակտիկան ցույց է տալիս, որ հանցագործությունների կամ հետագա հանցագործությունների ավելի հիմնավոր ռիսկի առկայության դեպքում ցանկալի է, որպեսզի դատախազությունը, ելնելով հանրային

շահերից, շարունակի դատական կարգով հետապնդումը, եթե նույնիսկ տուժողը հետ է վերցրել իր բողոքը: Քրեական հետապնդումը շարունակելու համար պետք է հաշվի առնվեին տարբեր գործոններ: Դրանք վերաբերում են հանցագործությանը (դրա ծանրությունը, տուժողի վնասվածքների բնույթը, հրազենի օգտագործումը, պլանավորումը), հանցագործին (նրա անձնական գործը, կրկնահանցագործության վտանգը, անցյալում բռնություն գործադրելու դեպքերը) և տուժողին ու հավանական տուժողներին (նրանց առողջությանը և անվտանգությանն սպառնացող ցանկացած ռիսկը, երեխաների վրա ցանկացած ազդեցությունը, հետագա սպառնալիքների առկայությունը) և հանցագործի ու տուժողի փոխհարաբերություններին (նախկին և ներկա դրությունը և տուժողի կամքին հակառակ քրեական հետապնդում սկսելու հետևանքները): Դիմումատուի գործում, չնայած բռնությանը և մահաբեր հրազենի գործածմանը, իշխանությունները, չցանկանալով միջամտել իրենց պատկերացմամբ «ընտանեկան բնույթի հարցին», բազմիցս դադարեցրել են ամուսնու դեմ հարուցված վարույթները և, տեղյակ լինելով մահվան սպառնալիքների մասին, չեն ուսումնասիրել բողոքները հետ վերցնելու շարժառիթները: Ինչ վերաբերում է այն փաստարկին, որ իշխանությունները վարույթը չեն սկսել հետևելով այն օրենսդրական նորմին, որի համաձայն վարույթը դադարեցվում է բողոքը հետ վերցնելու մասին դիմումը ներկայացնելուց հետո առնվազն տասնօրյա ժամկետում, այդ օրենսդրական կարգավորումը չի համապատասպանում անձին ընտանեկան բռնությունից պաշտպանելու պետության պոզիտիվ պարտականությանը ներհատուկ պահանջներին: Չի կարելի նաև պնդել, որ վարույթը շարունակելու դեպքում կարող են խախտվել տուժողի՝ Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքները, քանի որ դիմումատուի մորը սպառնացող ռիսկի լրջության դեպքում նման միջամտությունն անհրաժեշտ էր: Դատարանի դիտարկմամբ սա այն դեպքը չէ, երբ իշխանությունները գնահատել են ամուսնու կողմից սպառնացող վտանգը և եզրակացրել, որ ազատությունից զրկելը ոչ համաչափ կլինի: Ավելի ճիշտ նրանք այդ հարցին ընդհանրապես չեն անդրադարձել: Ամեն դեպքում, ընտանեկան բռնության գործերում

հանցագործների իրավունքները չեն կարող ավելի բարձր դասվել, քան տուժողների կյանքի, ֆիզիկական և հոգեկան ամբողջականության իրավունքները:

(գ) Քննության արդյունավետությունը

Մահվան ելքով գործի կապակցությամբ հարուցված քրեական վարույթը ընթացել է ավելի քան վեց տարի, և բողոքը դեռ ընթացքի մեջ է: Սա չի կարող դիտավորությամբ սպանության վերաբերյալ իշխանությունների կողմից արագ արձանգանք համարվել, այն դեպքում, երբ հանցագործը խոստովանել է գործած հանցանքը:

Եզրափակելով, դիմումատուի գործի նկատմամբ կիրառված քրեական արդարադատության համակարգը չի դիտարկվում որպես համարժեք միջոց: Երբ իրավիճակը ներկայացվում է իշխանությունների ուշադրությանը, նրանք չեն կարող պատճառաբանել տուժողի վերաբերմունքը՝ արդարացնելու համար վտանգը կանխելու նպատակով իրենց համապատասխան միջոցներ ձեռնարկելու անհաջողությունը:

Եզրակացություն ՝տեղի է ունեցել խախտում (միաձայն):

Կոնվենցիայի 3-րդ հոդված

Հաշվի առնելով ամուսնու գործած հանցագործությունների ծանրության աստիճանը՝ իշխանությունների արձագանքը վերջինիս գործողություններին ակնհայտորեն անհամաչափ է եղել: Դատական որոշումները չեն ունեցել նկատելի կանխարգելիչ ազդեցություն և նույնիսկ հանդուրժողականության տարրեր են պարունակել ամուսնու նկատմամբ, ով դիմումատուի մորը յոթ անգամ դանակահարելու համար ենթարկվել է կարճաժամկետ ազատազրկման (որը փոխարինվել է տուգանքով), և նույնիսկ, փոքր չափի տուգանքի, որը ենթակա էր մարման՝ միանվագ վճարման ձևով: Ավելին, մինչև 1998 թվականը, երբ թիվ 4320 օրենքն ուժի մեջ մտավ, համաձայն որի՝ թուրքական օրենսդրությունը սահմանում էր ընտանեկան բռնությունից պաշտպանելուն ուղղված որոշակի վարչական և ոստիկանական միջոցներ, նույնիսկ այդ ժամանակ, առկա միջոցներն ու սանկցիաներն արդյունավետ չեն կիրառվել դիմումատուի գործում:

Վերջապես, այն, որ դիմումատուի նկատմամբ բռնությունը շարունակվել է, և իշխանությունները շարունակ անգործություն են ցուցաբերել, անհանգստություն է առաջացնում: Չնայած դիմումատուի՝ իրեն օգնություն տրամադրելու խնդրանքին, ոչինչ չի արվել, մինչև Դատարանը դիմել է Կառավարությանը՝ պաշտպանիչ միջոցների վերաբերյալ տեղեկություն տրամադրելու պահանջով: Հակիրճ՝ իշխանությունները չեն ձեռնարկել պաշտպանական միջոցներ՝ նախկին ամուսնու կողմից դիմումատուի անհատական ամբողջականության նկատմամբ լուրջ խախտումները արդյունավետորեն կանխարգելելու համար:

Եզրակացություն ՝տեղի է ունեցել խախտում (միաձայն):

Կոնվենցիայի 14-րդ հոդվածը՝ 2-րդ և 3-րդ հոդվածների զուգակցմամբ

Դատարանը նշել է, որ պետությունների ճնշող մեծամասնության կողմից ընդունված միջազգային իրավունքի համապատասխան նորմերի և սկզբունքների համաձայն՝ Պետության, նույնիսկ ոչ միտումնավոր ձախողումը, կանանց պաշտպանել ընտանեկան բռնությունից, հանդիսանում է օրենքով սահմանված հավասար պաշտպանության իրավունքի խախտում: Դիարբեքիրի իրավաբանների միության և «Ամնեսթի Ինթերնեյշընալ»-ի զեկույցներում, որոնց դեմ Կառավարությունը չի առարկել, արձանագրված է, որ ընտանեկան բռնության զոհեր առավել մեծ թվով գրանցվել են Դիարբեքիրում, որտեղ դիմումատուն ապրել է համապատասխան ժամանակահատվածում: Բոլոր տուժողները կանայք էին, որոնց ծանրակշիռ մեծամասնությունն ուներ քրդական ծագում, անգրագետ էր կամ ստացել էր ցածր մակարդակի կրթություն և սեփական եկամտի աղբյուր չուներ: Զեկույցներում նաև նշված էր, որ իշխանություններն ընտանեկան բռնությունների նկատմամբ ունեն հանդուրժողական վերաբերմունք, և որ առկա միջոցները չեն կիրավում արդյունավետորեն: Ոստիկանները չեն քննում բողոքները, այլ փորձում են ստանձնել միջնորդի դեր՝ ջանալով համոզել տուժողներին վերադառնալ տուն և հետ վերցնել իրենց բողոքները: Վարույթների ձգձգումները հաճախակի բնույթ են կրում, և դատարանները քննում են նմանատիպ վարույթները որպես ամուսնալուծության գործեր: Ընտանեկան

բռնության մեղավորները չեն պատժվում, ինչի հիմքում ընկած են ավանդույթները կամ արժանապատվությունը:

Այսպիսով, ընտանեկան բռնությունների զոհերը հիմնականում կանայք էին, իսկ Թուրքիայում ընդհանուր և խտրական դատական գործընթացն ստեղծում էր դրա համար նպաստավոր մթնոլորտ: Բռնությունները, որոնցից տուժել են դիմումատուն ու նրա մայրը, կարելի է դիտարկել որպես կանանց նկատմամբ գենդերային և խտրական վերաբերմունքի արդյունք: Չնայած վերջին տարիներին Կառավարության նախաձեռնած բարեփոխումներին՝ դատական համակարգի անտարբերությունը և հանցագործների անպատժելիությունը, ինչպես դիմումատուի գործում է, ապացուցում են, որ իշխանությունները բավարար միջոցներ չեն ձեռնարկել ընտանեկան բռնությունների կանխարգելման ուղղությամբ:

Եզրակացություն ՝տեղի է ունեցել խախտում (միաձայն):